

Նամակ Բելգիայի հայ երիտասարդներից

Հարգելի հայրենակիցներ,

Լրացավ զինվորական բժիշկ Վահե Ավետյանի մահվան 40 օրը:

Բելգիայի "ՀԱՅԱՍՍԱ" Հայ Ուսանողական Միությունը կազմակերպեց սգո մոմավառություն և տեղեկատվական հանդիպում "Հայաստանի քաղաքացին այսօրվա Հայաստանում" խորագրով, որը տեղի ունեցավ "Մուրբ Մարիամ Մագդալենացի" հայկական առաքելական եկեղեցում:

Մեզ՝ երիտասարդներին, հատկապես մտահոգում էր Հայաստանում տիրող վախի, անպատժելիության և թողտվության մթնոլորտը, որտեղ շարքային հայ քաղաքացին հայտնվել է անպաշտպան վիճակում:

Վահե Ավետյանի հետ տեղի ունեցած ողբերգությունը հերթական անգամ փաստում է առկա իրավիճակը: Երիտասարդ՝ ընդամենը 32 տարեկան բժիշկ սպան չընկավ մարտի՝ դաշտում թշնամու արձակած գնդակից, ոչ էլ ավտովթարի զոհ դարձավ: Ո՛չ, նա սպանվեց՝ սպանվեց մարդկային դեմքը կորցրած տգետ տականքների կողմից, որոնց համար սպանելը նույնքան հեշտ է, որքան խաբելն ու գողանալը: Այս դեպքը բացահայտ մարտահրավեր է նետված մեր հասարակության այն առողջ ուժերին, որոնք չեն դադարում պայքարել օրենքի գերակայության և արդարության համար:

Ճակատագրի բերումով, օտար ափերում հայտնված երիտասարդներս՝ չենք կարող անտարբեր մնալ հայրենիքում տիրող անառողջ երևույթների հանդեպ: Իրավիճակը տագնապալի է: Մեծ չափերի հասնող արտագաղթը, սոցիալական անարդարությունը, գործազրկությունը, երկրի ընդերքի վայրի շահագործումը, կաշառակերությունը և բազմաթիվ այլ խիստ բացասական իրողություններ՝ կասկածի տակ են դնում մեր պետականության հետագա գոյությունը:

Մենք չենք լռելու: Լռությունը հավասարազոր է ինքնասպանության: Եկել է երկիրն աղբից մաքրելու պահը:

«Հայասա» Բելգիայի Հայ Ուսանողական Միություն

